ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱԳՅՈՒԼԵՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Ադրբեջանում իսլամի դերի ու նշանակության, հասարակական–քաղաքական կյանքում դրա տեղի մասին բավական շատ է խոսվում ու քննարկվում, և դա պայմանավորված է վերջին տարիներին հատկապես այդ երկրում իսլամական գործոնի ազդեցության աճով: Ադրբեջանում ընդհանրապես իսլամական արժեհամակարգի և կրոնի դերի հետ կապված միտումներն ամբողջացվում են քաղաքական շարժառիթների մեջ, քանի որ կրոնական գործոնի տարածման հիմնական սուբյեկտներ են մեծմասամբ Թուրքիան և Իրանը, որոշակի չափով նաև Սաուդյան Արաբիան, Պարսից ծոցի միապետությունները, ինչն էլ խնդիրը տեղափոխում է նաև «աշխարհաքաղաքական մրցակցության» հարթություն: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում Ադրբեջանում նուրջուականության և հատկապես գյուլենական շարժման տարածման միտումները, հասարակական–քաղաքական գործընթացներում դրա հնարավոր ազդեցությունը և միտումները:

Գյուլենական շարժումը բավական ակտիվ է ինչպես Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետություններում, այնպես էլ ՌԴ մի քանի սուբյեկտներում, հատկապես Թաթարստանում և Բաշկիրիայում[1]: 2013 թ. մարտի սկզբներին Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ) կողմից Ս. Պետերբուրգում իրականացված օպերատիվ–հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվեցին ու ձերբակալվե–

[1] Саид Нурси и нурсизм в России и Татарстане: идеология, распространение, конфликтный потенциал, http://www.riss.ru/?activityId=152.

ցին «Նուրջու» կրոնական շարժման 10 անդամներ, որոնցից 4–ը՝ Ադրբեջանի քաղաքացիներ: Նրանց մոտից առգրավվեց մեծ քանակությամբ թուրքերեն ու ռուսերեն լեզուներով կրոնական բովանդակությամբ գրականություն, որն արգելված է ՌԴ ողջ տարածքում: Ըստ ռուսական հատուկ ծառայությունների՝ «Նուրջու» կրոնական շարժման գործունեությունը առանձնանում է նրանով, որ այն սերտ կապերի մեջ է թուրքական հատուկ ծառայությունների հետ և գործում է հօգուտ թուրքական հետախուզության[2]:

2013 թ. մայիսին բավական հետաքրքիր տեղեկատվություն հայտնվեց, որը վերաբերում էր սիրիական հակամարտության մեջ գյուլենական շարժման որոշակի ներգրավվմանն ու գործունեությանը: Մասնավորապես Սիրիայի կառավարության գաղտնի ծառայության բարձրաստիճան աշխատակիցը մանրամասներ էր հրապարակել սիրիական հակամարտության մեջ Թուրքիայի դերակատարության ու գործունեության վերաբերյալ, որում գյուլենական շարժումը դրսևորել է գործնական ակտիվություն: Ըստ այդ հրապարակման՝ Թուրքիայից դեպի Սիրիա զինամթերքի ու սննդամթերքի մատակարարումներն իրականացվում էին նաև գյուլենական շարժման ազդեցության ու ենթակայության տակ գտնվող հիմնադրամների ու կազմակերպությունների միջոցով[3]:

Գյուլենական շարժումն իր հիմնական ուշադրությունը կենտրոնացրել է հատկապես ԱՊՀ տարածքի թյուրքալեզու երկրների ուղղությամբ: Միայն Կենտրոնական Ասիայի երկրներում և Ադրբեջանում 1997–1998 թթ. դրությամբ գյուլենական դպրոցների թիվը գերազանցում էր 8 տասնյակը[4]: Ժամանակի ընթացքում, սակայն, Կենտրոնական Ասիայում գործող դպրոցների թիվը զգալիորեն նվազեց: Նախ՝ Ուզբեկստանի իշխանությունները, անընդհատ վտանգ զգալով իսլամական հոսանքների ու շարժումների տարածումից, փակեցին գյուլենականների կողմից գործող դպրոցները, իսկ Թուրքմենստանում դրանք վերջին տարիներին պետականացվեցին: Ադրբեջանում գյուլենականների հիմնած դպրոցները մինչև օրս շարունակում են գործել[5]:

---

[2] Взяли с прочитанным, http://www.rg.ru/2013/03/05/extreme.html.

[3] Ринат Ахметзянов, Как Вашингтон и Анкара работают с «сирийской оппозицией». Новые подробности, «Российские тенденции», 10.05.2013, http://rostend.su/?q=node%2F927.

[4] Ա. Շաքարյան, Արարատից այն կողմ. ապակողմնորոշվելով Թուրքիան, Եր., 2011, էջ 105–107:

[5] Саид Нурси и Фетхуллах Гюлен в Центральной Азии: Влияние на религию и образование после распада СССР, http://www.fergananews.com/articles/7598.

Հարկ է նշել, որ շարժման արտաքին ծավալումը խրախուս–վել է թուրքական պետության կողմից՝ նաև իշխանության ղեկին եղած աշխարհիկ ուժերի շրջանում, քանի որ դա տեղավորվում էր Թուրքիայի արտաքին քաղաքական նպատակների ու հավակ–նությունների մեջ: Տվյալ պարագայում գյուլենական շարժումը կարելի է դիտարկել բուն Թուրքիայի գաղափարական–մշակու–թային հեգեմոնիայի տեսանկյունից: Այն արտաքին քաղաքա–կանության իրականացման կարևորագույն գործիքներից էր հա–մարվում՝ հատկապես թյուրքալեզու հանրույթների հետ հարա–բերությունների հարցում: Շարժումը Թուրքիայի արտաքին քա–ղաքականության մեջ յուրահատուկ «փափուկ ուժի» (soft power) կիրառման կարևոր դեր ուներ: Բացի այդ, ինչպես նշվեց, շարժ–ման հնարավորությունները օգտագործվում էին թուրքական ար–տաքին հետախուզական ծառայությունների կողմից, որոնց մա–սին բավական շատ փաստեր են հրապարակվել հատկապես Ռուսաստանի ԱԴԾ–ի կողմից:

Ադրբեջանի անկախացումից հետո նուրջու ուսմունքը, հատ–կապես գյուլենական շարժումը սկսեց ակտիվորեն ներթափան–ցել այդ երկիր և բավական արագ կարողացավ այնտեղ հիմնել իր բջիջները՝ տարբեր հաստատությունների անվան ներքո: Դա պայմանավորված էր նախ և առաջ երկրի նախկին նախագահ Հեյդար Ալիևի բարյացակամ վերաբերմունքով, քանի որ Նա–խիջևանի Ինքնավար Հանրապետության ղեկավար եղած ժա–մանակ գյուլենական շարժումը նրան բավական լուրջ օգնություն էր ցուցաբերում: Նորանկախ Ադրբեջանի իշխանությունների համար այդ շարժման գործունեությունը դիտարկվում էր որպես կարևոր գործոն Թուրքիայի հետ հարաբերությունների զար–գացման համար, հատկապես կրթական–մշակութային մոդելի համատեքստում[6]: Ներկայում էլ այդ շարժումն ամենաակատիվ–ներից է Ադրբեջանում և շարունակական ազդեցության մեծաց–ման միտումներ ունի: Գյուլենական շարժման գործունեությունը Ադրբեջանում, կարելի է ասել, քողարկված է և այն ուղղակի հա–կամարտության չի մտնում շիական կրոնական համակարգի ու աշխարհիկ վարչակարգի հետ: Շարժման գործունեության հիմ–քում դրված է դանդաղ ու փափուկ գործունեության սկզբունքը, ինչն ավելի արդյունավետ է: Գյուլենական շարժման մեծ օրա–

[6] F. Aliyev, The Gulen Movement in Azerbaijan, http://www.currenttrends.org/research/detail/the–gulen–movement–in–azerbaijan; Э. Мамедов, Азербайджан: Оценивая отношение Баку к движению Гюлена, http://russian.eurasianet.org/node/59185.

կարգը Ադրբեջանում պետական ու կրթական համակարգում տարածվելն է, ազդեցության ձեռքբերումը: Վերջին տարիներին Ադրբեջանում գործում էին գյուլենական շարժմանը պատկանող «Qafqaz» համալսարանը, ինչպես նաև 12 միջնակարգ դպրոցներ ու վարժարաններ Բաքվում, Սումգայիթում, Մինգեչաուրում, Ղուբայում, Նախիջևանում և այլ քաղաքներում, 11 մինչբուհական նախապատրաստական դասընթացներ, որոնցում ուսանողների ընդհանուր թիվը կազմում էր մոտ 5000[7]: Գործում են «Xazar» ռադիո–հեռուստաընկերությունը, «Samanyolu» հեռուստաալիքը, «Burc» ռադիոն, հրատարակվում են «Zaman» օրաթերթը, մի շարք այլ թերթեր ու պարբերականներ: Ակտիվ են նաև հասարակական ու գործարար ոլորտի ընկերություններն ու կազմակերպությունները: Ներկայում հստակ տվյալներ չկան Ադրբեջանում նուրջու հետևորդների թվաքանակի վերաբերյալ. ադրբեջանական ՁԼՄ–ների տեղեկությունների համաձայն՝ նրանց թվաքանակն անցնում է մոտ 40 հազարը, սակայն ադրբեջանցի հետազոտող Ա. Յունուսովն իր աշխատության մեջ նշում է, որ դաշտային ուսումնասիրությունների համաձայն՝ նրանց թիվն Ադրբեջանում հազիվ թե գերազանցի 10 հազարը[8]:

Ադրբեջանում գյուլենական շարժումը լայն տարածում է գտել հատկապես քաղաքային բնակչության շրջանում՝ շնորհիվ իր լավ կազմակերպված կրթական, լրատվական ու գործարար կազմակերպությունների, և դրանով իսկ այն իր հնարավորություններով առանձնանում է մյուս իսլամական ուղղություններից, որ փորձում են ազդեցություն ձեռք բերել այդ երկրում: Այն նաև, ի տարբերություն այլ իսլամական ուղղությունների, ուղղակիորեն կամ բացահայտ չի ներգրավվել Ադրբեջանում կրոնի տեղի ու դերի վերաբերյալ քաղաքական սուր քննարկումներին[9]: Գյուլենական շարժումը գրավիչ է հատկապես Ադրբեջանի երիտասարդության շրջանում՝ իր չափավոր իսլամական ու պանթյուրքական գաղափարներով՝ որպես այլընտրանք ու հակակշիռ Բաքվի աշխարհիկ

---

7 Birol Topuz, The Gulen inspired Turkish schools in Baku, Azerbaijan, and mystery of their successes, http://www.internationalconference.com.my/proceeding/icm2011_proceeding/084_316_ICM2011_PG1182_1191_TURKISH_SCHOOLS.pdf.

8 А. Юнусов, Исламская палитра Азербайджана, Институт мира и демократии, Баку 2012, с. 50.

9 F. Aliyev, նշվ. աշխ.:

ռեժիմին, ծայրահեղ վահաբականությանը կամ էլ իրանական շի–այականությանը[10]:

Գյուլենական շարժումը Ադրբեջանում բավական ակտիվ է և լուծում է մի քանի խնդիր: Նախ՝ առաջին հերթին այդ շարժումն առավելապես աչքի է ընկնում իր այսպես ասած իսլամական ու թուրքական օրակարգով, այսինքն՝ իր գործունեության մեջ շաղ–կապված են իսլամական ու թուրքական ազգայնականությունը կամ այլ կերպ ասած թուրք–իսլամական համադրությունը: Մյուս կողմից՝ Թուրքիան նաև խրախուսում էր այդ շարժման ծավա–լումն Ադրբեջանում՝ որպես հակադրություն իսլամական մյուս ուղղություններին՝ վահաբականությանը և ամենակարևորը՝ այդ երկրի համար ավանդական համարվող շիականությանը, որը դիտարկվում է որպես իրանական ազդեցության լուրջ գործոն: Տվյալ պարագայում գյուլենական շարժումն իրականացնում էր նաև հստակ քաղաքական նպատակներ:

Գյուլենականությունն Ադրբեջանում ունի մի կարևոր առանձ–նահատկություն: Այն բավական զգուշավոր և հարաբերական պասիվ է գործում զուտ կրոնական տեսանկյունից՝ խուսափելով բացահայտ առճակատման գնալ աշխարհիկ կարգերի ու շրջա–նակների դեմ, քանի որ իշխանական վերնախավն իրեն նույնպես համարում է աշխարհիկ: Չնայած հենց ադրբեջանական մի շարք հրապարակումներ են եղել, որոնք փաստում են, որ դա միայն արտաքուստ է և այդ շարժման օրակարգն ավելի կրոնական է, քան առաջին հայացքից: Նույնիսկ որոշ ադրբեջանցի փորձա–գետներ նշում են, որ այդ շարժումն Ադրբեջանում ցանկանում է շիականությունը փոխարինել սունիական ուղղությամբ, այն էլ՝ թուրքական: Չնայած ադրբեջանական իշխանությունների կող–մից գյուլենականների դեմ գործադրված «զուսպ» ճնշումներին՝ Ադրբեջանում այն գնալով ավելի է ընդլայնել իր գործունեությու–նը կարևորագույն ոլորտներում: Ըստ ադրբեջանական ՁԼՄ–նե–րի՝ շարժման հետ ուղղակի կամ անուղղակի կապի մեջ են Ադր–բեջանի բարձրաստիճան պաշտոնյաներ, պատգամավորներ, հայտնի լրագրողներ ու կրթության ոլորտի ներկայացուցիչներ: Ըստ որոշ տեղեկությունների՝ Ադրբեջանի նախագահի աշխա–տակազմի ղեկավար Ռ. Մեհթիևի որդիները սովորում էին գյու–լենական ուսումնական հաստատություններում: Ադրբեջանական մշակույթի զարթոնքի ու զարգացման հիմնադրամի տնօրեն Շ. Թաղիևի հրապարակած տվյալներով՝ գյուլենական շարժումը

[10] F. Aliyev, նշվ. աշխ., Э. Мамедов, նշվ. աշխ.:

լայնորեն տարածվում է նաև Ռուսաստանի ադրբեջանցիների շրջանում: Մոսկվայում նուրջիզմի ակտիվ քարոզչությամբ է զբաղվում Ռուսաստանի՝ ադրբեջանցիների համերաշխության կենտրոնի ղեկավար Ն. Շահփելենգովը և նուրջուների թիրախում են հիմնականում ռուսաստանյան հեղինակավոր բուհերում սովորող ադրբեջանցի ուսանողները: Նրանք իրենց հիմնական շեշտադրումները կատարում են ադրբեջանական այն շրջանակների վրա, որոնք պետական ու գործարար շրջանակներում հետագայում կարող են զբաղեցնել պատասխանատու պաշտոններ[11]:

Չնայած նախկինում գյուլենական շարժումն Ադրբեջանի իշխանությունների համար որպես այդպիսին սպառնալիք չի ներկայացրել երկրում իսլամական արժեհամակարգի տարածման ու աշխարհիկ կարգերի տեսանկյունից, ներկայում իրավիճակն այդ առումով որոշակիորեն փոխվում է: Հատկապես նախագահ Իլհամ Ալիևի կառավարման տարիներին, երկրի քաղաքական կյանքում իսլամական գործոնի դերի մեծացման հետ զուգահեռ, փոխվեց նաև իշխանությունների վերաբերմունքն այդ շարժման նկատմամբ և սկսեցին հետապնդումներ ու ձերբակալություններ[12]: Սա ուղղակի կապված չէ այդ շարժման կողմից ներկայացվող սպառնալիքներով, այլ՝ անուղղակի: Նախ՝ շարժման միջոցով ադրբեջանական հասարակության որոշ շրջանակներ ավելի են հակվում դեպի կրոնական պահպանողական արժեհամակարգին և այս պարագայում ընդհանուր իսլամական արժեհամակարգի տարածման ու ազդեցության գործոնը կարող է պարարտ դաշտ ստեղծել ավելի արմատական ուղղությունների գործունեության համար, ինչպիսին է, օրինակ, վահաբականությունը: Ադրբեջանի համար ընդհանրապես կրոնական օրակարգը ժամանակի հետ կարող է ավելի վտանգավոր դառնալ: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է իսլամական մի քանի ուղղությունների միաժամանակ տարածմանն ու հաստատմանն այդ երկրում: Արտաքին ուժերով պայմանավորված իսլամական մի քանի ուղղություններ տարածում են գտնում Ադրբեջանում[13]: Մի կողմից՝ պետական շիական ուղղությունն է, որը հիմնական կրո–

[11] Саид Нурси и нурсизм в России и Татарстане: идеология, распространение, конфликтный потенциал, http://www.riss.ru/?activityId=152.

[12] Birol Topuz, The Gulen inspired Turkish schools in Baku, Azerbaijan, and Mystery of their Successes, http://www.internationalconference.com.my/proceeding/icm2011_proceeding/084_316_ICM2011_PG1182_1191_TURKISH_SCHOOLS.pdf, p. 49.

[13] Arzu Geybullayeva, Is Azerbaijan Becoming a Hub of Radical Islam?, http://www.esiweb.org/pdf/esi_turkey_tpq_id_110.pdf.

նական ուսմունքն է, մյուս կողմից՝ հատկապես երկրի հյուսիսում ազդեցություն հավաքող սալաֆիականությունը և ծայրահեղա–կան այլ ուղղություններ: Գյուլենական շարժումն իր հերթին տա–րածում է թուրքական հանաֆիական մազհաբի սունիական ուղ–ղությունը, որն ավելի չափավոր է և նպատակ ունի որոշակիորեն կանխելու նաև ծայրահեղական ուղղությունների հետագա տա–րածումը: Սրանով նաև կարելի է բացատրել Ադրբեջանի իշխա–նությունների որոշակի թողտվությունն այդ շարժմանը, չնայած արդեն իսկ ցուցաբերում են զգուշավորություն և նաև ցուցադրա–կան գործողություններ, ինչպես, օրինակ՝ վերջին մի քանի տա–րիներին իրականացված ձերբակալությունները: Ըստ ամերիկյան վերլուծական «Stratfor» կազմակերպության՝ հենց այդ երեք հիմ–նական իսլամական ուղղություններն ու շարժումն են, որ կարող են սպառնալիք ներկայացնել Ադրբեջանի համար[14]: Ադրբեջանի կրոնական արդեն իսկ խորացող խայտաբղետությունը ժամա–նակի հետ կարող է դառնալ վտանգավոր և անկառավարելի՝ ուղ–ղակի առճակատման տանելով մյուս ուղղությունների հետ: Իսկ առճակատումն իր հերթին կարող է վերածվել զինյալ պայքարի ու ահաբեկչության: Գյուլենական շարժման վերաբերյալ բավական կոշտ ու բացասական վերաբերմունք են դրսևորում հատկապես վահաբականները: Նույնը կարելի է ասել նաև ադրբեջանական շիական հոգևորականության մասին: Այս առումով Ադրբեջանի դավանական խճանկարի ապագան բավական մշուշոտ է:

Ակնհայտ է, որ Ադրբեջանի իշխանությունների համար իս–լամական գործոնը բավական վտանգավոր է, և նրանց կողմից ամեն ինչ արվում է երկրում իսլամական ուղղությունների ազդե–ցությունը նվազեցնելու համար, չնայած դրան հակառակ հասա–րակական շերտերում կրոնի դերը գնալով մեծանում է, և դա մեծ հաշվով անկասելի է: Իսկ իշխանությունների գործողությունները տալիս են հակառակ էֆեկտը: Այդ շարժումն Ադրբեջանում քա–ղաքական լուրջ գործոնի վերածվելու հնարավորություն ուներ և դա էլ անհանգստացնում էր ալիևյան կլանին: Ադրբեջանում նույ–նիսկ խոսում էին 2015 թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ շարժման ու համայնքի քաղաքական կշռի ձեռքբեր–ման մասին[15]: Գյուլենական շարժման քաղաքական ռազմավա–րությունը ավելի է պարզ դառնում շարժման առաջնորդ Ֆ. Գյուլե–

[14] Islamism in Azerbaijan, http://www.euractiv.com/europes–east/islamism–azerbaijan–analysis–512554.

[15] S□in□□liyeva, Az□rbaycanda nurçuların “2015” h□d□f bilindi, www.milliyyet.az/index.php?do=read_news&id=912.

նի՝ 1999 թ. արված հայտարարությունից, որտեղ, ներկայացնելով Թուրքիայում իսլամականության իր տեսլականը, հայտարարել է, որ շարժման անդամները պետք է աննկատ ներթափանցեն պետական համակարգ, ճյուղավորումներ տան, մինչև որ հասունանա իշխանության լծակներ ձեռք բերելու հարմար պահը: Ըստ Գյուլենի՝ վաղաժամ քայլեր անելը կարող էր կործանարար լինել այնպես, ինչպես դա եղավ Ալժիրում, Սիրիայում և Եգիպտոսում[16]: Ֆ. Գյուլենի կողմից արված այս հայտարարությունը կարող ենք համեմատել դեռևս Թուրքիայում իսլամամետ «Դեմոկրատական» կուսակցության կառավարման շրջանում նուրջու աղանդի հիմնադիր Սայիդ Նուրսիի այն հայտարարությանը, որ «Ես ունեմ ինձ հավատարիմ 600 հազար մյուրիդներ (աշակերտ–հետևորդներ): Ո՛չ կառավարությունը, ո՛չ էլ ոստիկանությունն ու ժանդարմերիան չեն կարող երկրում կարգ ու կանոն հաստատել: Դա Ալլահի կամքով կարող ենք անել միայն ես և իմ մարդիկ: Դեմոկրատներին ուժ է հարկավոր և ես բավական ուժեղ եմ…»[17]: Նա այս հայտարարությամբ փորձում էր Թուրքիայի կառավարությանը ցույց տալ նաև իր քաղաքական ներուժը նախընտրական շրջանում՝ դրանով իսկ ակնկալելով իսլամի դերի բարձրացման հարցում կառավարության նոր գործողությունները: Ս. Նուրսին 1950–ական թթ. հանդես էր գալիս իսլամամետ «Դեմոկրատական» կուսակցության պաշտպանությամբ և քաղաքական իսլամի դերակատարության բարձրացման օգտին: Ս. Նուրսին և նրա գլխավորած աղանդը 1950 թ. ներգրավված է եղել քաղաքական, հատկապես ընտրական գործընթացներում:

Այն, որ գյուլենական շարժումը Թուրքիայում ուներ քաղաքական հեռահար նպատակներ ու պլաններ, պարզ դարձավ 2013 թ. կառավարող *Արդարություն և զարգացում* կուսակցության ու համայնքի միջև սկսված սուր դիմակայության ու դրան հաջորդած բացահայտումների արդյունքում:

Տվյալ պարագայում Ադրբեջանում ևս գյուլենական շարժումը չի կարող լինել զուտ կրթամշակութային շարժում, այլ ուղղակի քաղաքական օրակարգը կախված է ժամանակի ու ռեսուրսների համատեղումից՝ Ադրբեջանում հասունացնելով դրա բազային հիմքերը:

Պետք է հաշվի առնել Ադրբեջանի հոգևոր առաջնորդ Ա. Փաշազադեի բացասական վերաբերմունքը գյուլենականների

[16] Ա. Փաշայան, «Արդարություն և զարգացում» կուսակցության իսլամական հենարանը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=513.

[17] Р. Кондакчян, Турция: внутренняя политика и ислам, Ер. 1983, с. 153

նկատմամբ[18] և չի բացառվում, որ վերջին տարիներին ադրբեջանական իշխանությունների կողմից իրականացված ձերբակալությունները, ինչպես նաև Բաքվում թուրքական մզկիթների փակումը հրահրված էին հենց նրա կողմից: Այս համատեքստում, չնայած նախկին տարիներին, Ալիևի վարչակազմը կարող է գնալ կտրուկ գործողությունների գյուլենական շարժման ազդցությունը կասցեներլու ուղղությամբ, և դրա նախանշաններն առկա են: Մի կողմից՝ Ալիևի վարչակարգը ցանկանում էր հաշվեհարդար տեսնել նաև գյուլենականների հետ, սակայն հասկանալով, որ դա ուղղակի կվտանգի Թուրքիայի հետ հարաբերությունները, դեռևս վճռական գործողություններ չի ձեռնարկում: Մյուս կողմից՝ էլ գյուլենական ուսմունքի ու ազդեցության տարածումը ժամանակի հետ դառնում է ավելի վտանգավոր նույն այդ վարչակարգի համար: Ամերիկյան Ջորջ Մեսոն համալսարանի պրոֆեսոր Պ. Մանդեվիլը, օրինակ, նշելով, որ իսլամական ուղղությունները լուրջ վտանգ են ներկայացնում Ադրբեջանում, դրանց շարքին էր դասել նաև գլուլենական ուղղությունը՝ փաստելով, որ ադրբեջանական վերնախավը լրջորեն մտահոգված է այդ հարցով[19]:

Որոշ մասնագետներ, սակայն, նշում են, որ գյուլենական շարժման կրոնական բաղադրիչի տարածման հնարավորությունները սահմանափակ են, և դա պայմանավորված է Ադրբեջանի հասարակության բազմատարրությամբ՝ աշխարհիկ շերտեր, շիականության հետևորդներ, ոչ թյուրքական փոքրամասնություններ և այլն[20]: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ զուտ կրոնական գաղափարախոսության տեսանկյունից շարժումը որոշակիորեն պասիվ է Ադրբեջանում, նշանակում է, որ նրա ռազմավարությունը քաղաքական նպատակների վրա է կառուցված: Դա կարող է լինել քաղաքաբնակների շրջանում իր կրթական–քարոզչական հաստատությունների միջոցով ինտելեկտուալ սերուցքի աճեցման ու քաղաքական–պետական համակարգում նրանց ներդրման միջոցով հասնել Ադրբեջանի կառավարող էլիտայի վրա լուրջ ազդեցության: Մնացյալ դեպքերում, ըստ Ադրբեջանում գյուլենական շարժման գործունեության դիտարկման, անիմաստ ու անպտուղ են դառնում հսկայական ներդրումներն այդ երկրում գյուլենականների կողմից: Ուստի Ադրբեջանում

[18] А. Пашаян, Исламские процессы в Азербайджане, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=1986.

[19] Власти Азербайджана опасаются религиозных течений, http://www.radioazadlyg.org/content/article/2178213.html.

[20] F. Aliyev, նշվ. աշխ.; Э. Мамедов, նշվ. աշխ.:

գյուլենական շարժման օրակարգը, կարելի է ասել, ավելի շատ քաղաքական է, քան կրոնական: Իսկ քաղաքական մակարդակում վերոնշյալ նպատակների իրագործման պարագայում կրոնական օրակարգն ավելի բացահայտ ու անկաշկանդ կարող է ի հայտ գալ: Հատկանշական է նաև այն, որ գյուլենական շարժմանը, ըստ հայտնի թուրքագետ Է. Ցյուրխերի, բնորոշ է իսլամական «թաքիյա»-ի հայեցակարգը, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում թաքցնելու իրական հավատամքն ու հայացքները[21]:

Ադրբեջանում շարժման հեռանկարը որոշակիորեն անորոշ է դարձել: Ներկայում իրավիճակը փոխվել է, և Թուրքիայում տեղի ունեցող զարգացումները կարող են լրջորեն անհանգստացնել նաև Ի. Ալիևին: Խոսքը վերաբերում է 2013 թ. դեկտեմբերին Թուրքիայում կաշառքի ու փողերի լվացման գործերով իրավապահ մարմինների կողմից իրականացված լայնամասշտաբ ձերբակալություններին, այդ թվում՝ նախարարների որդիներ, հայտնի գործարարներ, որով լրջորեն սրվեցին հարաբերությունները Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի և գյուլենական շարժման առաջնորդ Ֆ. Գյուլենի միջև[22]: Դիմակայության ժամանակ անվտանգության ու դատական համակարգում գյուլենական ցանցի գործողությունների արդյունքում հրապարակվեցին կառավարությանը վարկաբեկելու նպատակ հետապնդող մի շարք հեռախոսազրույցներ, գաղտնալսումներ, որոնք վերաբերում էին Էրդողանին և կառավարության անդամներին: Նույնիսկ որոշ դեպքերում այդ հրապարակումները վերաբերում էին պետական ու ռազմական գաղտնիք հանդիսացող գաղտնալսումների նյութերին:

Թուրքիայում սկիզբ առած Էրդողան-Գյուլեն հակամարտությունը նախկին գաղափարակից դաշնակիցներին դարձրեց ոխերիմ թշնամիներ: Հակամարտության թերևս ամենահիմնական պատճառը իշխանության բաժանման հարցն էր: Ֆ. Գյուլենն արդեն իր ֆինանսական, կադրային ու տեղեկատվական դաշտում հզորացած ներուժով հավակնում էր Ռ. Թ. Էրդողանի հետ կիսել իշխանությունը, այսինքն՝ հստակ քաղաքական հայտ էր ներկայացվել: Մինչդեռ Էրդողանը պատրաստ չէր իր իշխանությունը կիսելու այլ դերակատարների հետ և սկսեց դրա լծակների չեզո-

[21] Rachel Sharon-Krespin, Fethullah Gülen's Grand Ambition, Turkey's Islamist Danger, Middle East Quarterly, Winter 2009.

[22] Büyük rüşvet operasyonunda Gözaltına alınanlar, http://www.hurriyet.com.tr/gundem/25387128.asp

քացման գործողություններ, ինչն էլ հանգեցրեց սուր դիմակայությանը:

Ադրբեջանում գյուլենական շարժման օրակարգը, կարելի է ասել, ավելի շատ քաղաքական է, քան կրոնական: Թուրքիայում Էրդողան–Գյուլեն հակամարտության թեժ շրջանում իշխանությանը մոտ կանգնած թուրքական որոշ պարբերականներում Ադրբեջանի պետական ու անվտանգության համակարգում, բիզնես ոլորտում գյուլենականների տարածման վերաբերյալ հրապարակումները բնավ պատահական չէին և ադրբեջանական իշխանություններին ուղղված հստակ ուղերձներ էին: Թուրքական պարբերականներից մեկը գրել էր, որ ինչպես եվրոպական, այնպես էլ գյուլենական դպրոցներ ունեցող այլ երկրներում իրավապահներն անցնելու են գործողությունների: Ադրբեջանն այս առումով առաջնայիններից կարող է լինել: Այն, որ ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ադրբեջանում գյուլենականները կիրառել են այսպես կոչված գյուլենական «ինքնության քողարկումը», լուրջ բարդություններ է առաջացնում: Թուրքական իշխանությունների հրահրմամբ կամ ուղղակի հանձնարարությամբ ադրբեջանական իշխանությունների գործողությունների ձեռնարկումը Ադրբեջանում գյուլենականների դեմ բավական ցավոտ կարող է լինել Ալիևի վարչակարգի համար: Այնպես, ինչպես Թուրքիայում գյուլենականները պահուստային տարբերակով պատրաստվել էին այս օրվան, այնպես էլ դա արվել է Ադրբեջանում: Այսինքն՝ քաղաքական օրակարգի ձևավորման համար ստեղծվել են անհրաժեշտ նախադրյալները՝ սցենարային տարբեր գործընթացների համար:

«Կոմպրոմատային պատերազմը», որը լայնորեն սկսեց կիրառվել Թուրքիայի վարչապետ Էրդողանի դեմ, երկար ժամանակ պատրաստված գործողություն էր, որը գործի դրվեց անհրաժեշտության պահին: Նույնը կարող է պատրաստված լինել և ամենայն հավանականությամբ էլ այդպես է, ալիևյան վարչակազմի դեմ: իսկ Ալիևի կողմից Ադրբեջանում գյուլենականների դեմ հաշվեհարդարը առաջնահերթորեն կտեղափոխվի հենց այդ դաշտ, ինչը կդրսևորվի Ալիևի ու ադրբեջանական վարչակազմի դեմ բազմաթիվ վարկաբեկիչ բացահայտումներով, որոնք կարող են հարվածի տակ դնել Ալիևի առանց այդ էլ գոյություն չունեցող հեղինակությունը ներքին ու արտաքին մակարդակներում: Այսինքն, տարիներով Ադրբեջանի պետական ու նաև իրավապահ համակարգում ներդրված գյուլենական ներուժը կարող է կրկ–

նել Ադրբեջանում թուրքական սցենարը իր համար ոչ ցանկալի գործողությունների պայմաններում: Առավել ևս Էրդողան–Գյուլեն հակամարտությունը բացահայտ ի ցույց դրեց գյուլենականների դերակատարությունը հատկապես երկրի իրավապահ համակարգում, որը նույնիսկ որոշակի ժամանակահատվածներում դառնում էր դժվար վերահսկելի կառավարության համար: Սա պայմանավորված է տարիներով երկրի իրավապահ համակարգում գյուլենականների շարունակական ներդրմամբ, կադրային ապարատի ստեղծմամբ, ինչը հնարավոր էր դարձնում արդեն դրա ոչ ուղղակիորեն կառավարելը, և որն Էրդողանն անվանեց զուգահեռ պետություն:

2014 թ. սկզբներից թուրքական ԶԼՄ–ները սկսեցին ակտիվորեն քննարկել ու հրապարակումներ ունենալ Ադրբեջանում գյուլենական համայնքի, հավանական անդամների ու դերակատարության վերաբերյալ: Սկզբնական շրջանում դրանք ուղղակի ադրբեջանական իշխանություններին ուղղված ոչ պաշտոնական ուղերձներ էին:

Նույն թվականի փետրվարին թուրքական որոշ լրատվամիջոցներ թիրախի տակ առան Ադրբեջանի պաշտպանության նախարար Զ. Հասանովին և արտաքին գործերի նախարար Է. Մամեդյարովին՝ նրանց մեղադրելով գյուլենական շարժման հետ կապերի մեջ: Թուրքական ԶԼՄ–ներից հրապարակեցին Ֆ. Գյուլենի գաղտնի հեռախոսազրույցի ձայնագրության մասին, որի հիման վրա Ադրբեջանի նորանշանակ պաշտպանության նախարար Զ. Հասանովը որակվում էր որպես գյուլենական համայնքին մոտ կանգնած անձնավորություն: Ադրբեջանի կառավարությունը, սակայն, հերքեց նման հրապարակումների իսկությունը[23]: Նման հրապարակումների հեղինակը թուրքական «Haber10» լրատվական կայքն էր[24], որն, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, հանդիսանում է թուրքական հատուկ ծառայությունների խոսափողներից և նույնիսկ իրականությանը չհամապատասխանող նման հրապարակումները կարող էին ուղղակի Ադրբեջանի իշխանություններին ուղղված հատուկ ազդակ լինեին:

Թուրքական կառավարությանը մոտ կանգնած «Sabah» պարբերականը 2014 թ. մարտի 3–ին հրապարակեց ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներից մեկի մոտ հայտնված Ադրբեջանում գյուլենականների կարևորագույն կրթական հաստատու–

[23] Azerbaycan'da paralel örgüt krizi!, http://www.haber10.com/haber/478631/

[24] Турецкая разведка переводит стрелки на Эльмара Мамедъярова и Закира Гасанова, http://haqqin.az/comics/17473

թյունների համակարգող կառույցը հանդիսացող «Çağ Öğretim Işletmeleri» ընկերության տնօրենի գաղտնի նամակը շարժման առաջնորդ ֆ. Գյուլենին, որտեղ մտահոգություն էր հայտնվում, որ Թուրքիայում ընթացող զարգացումները բացասական են ազդում նաև Ադրբեջանում գյուլենականների վրա, ուստի կոչ էր արվում քայլեր ձեռնարկելու այդ ուղղությամբ[25]: Ըստ այդմ՝ Ադրբեջանում գյուլենական շարժման կողմից կիրառվել է «թուրքական մոդելը»՝ նախագահի աշխատակազմում, ներքին գործերի, արդարադատության, արտակարգ իրավիճակների նախարարություններում ու նաև հետախուզության ակադեմիայում գյուլենական կադրային ապարատի աստիճանական ստեղծումը, այդ ոլորտներում նրանց իսկ ներդրած «համակարգողների» կամ ինչպես, Թուրքիայում է այսօր ընդունված, «համայնքի իմամների» միջոցով:

Սկզբում թուրքական, այնուհետև ադրբեջանական մամուլում Ադրբեջանում գյուլենականների ու նրանց ցանցի վերաբերյալ հրապարակումներ սկսեցին ի հայտ գալ, նույնիսկ հրապարակվեցին գաղտնի նամակներ՝ Ադրբեջանում գյուլենական համայնքի տարածման ու կոնկրետ պաշտոնյաների վերաբերյալ:

Ադրբեջանի պետական համակարգում գյուլենականների տարածման վերաբերյալ թուրքական մամուլի ակտիվ հրապարակումներից հետո գործի անցան նաև ադրբեջանական լրատվամիջոցները, որոնք մի տեսակ «որս» սկսեցին պետական համակարգում գյուլենականներին բացահայտելու ուղղությամբ: Փաստորեն թուրքական մամուլի կամ հատուկ տեղեկատվական ուղերձները Թուրքիայից Ադրբեջան տեղ են հասել: Թուրքիայում այսպես կոչված «զուգահեռ պետության» ադրբեջանական տարբերակը ակտիվ քննարկման մեջ հայտնվեց տեղական մամուլում: Ադրբեջանական մամուլի համաձայն՝ Թուրքիայի նմանությամբ Ադրբեջանի պետական ու այլ ոլորտներում գյուլենականների բազա կամ ավելի ճիշտ «կադրային ապարատ» է ստեղծվել:

Ըստ հրապարակումների՝ գյուլենական շարժման հետ սերտ կապերի մեջ են Ադրբեջանի նախագահի աշխատակազմի բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ աշխատակազմի քաղաքական վերլուծությունների ու տեղեկատվության բաժնի ղեկավար Էլնուր Ասլանովը, «Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի» տնօրեն Ֆերհաթ Մամեդովը, խորհրդարանի պատ-

[25] Cemaatin Azerbaycan paniği, http://www.sabah.com.tr/Gundem/2014/03/03/cemaatin–azerbaycan–panigi

գամավորներ, քաղաքական գործիչներ: Ադրբեջանական մամուլը կարողացել է ձեռք գցել Ստամբուլում Ադրբեջանի գլխավոր հյուպատոս Հասան Զեյնալովի կողմից նախագահի աշխատակազմին ու ԱԳՆ–ին ուղարկված զեկույցը, որտեղ ներկայացված է եղել ադրբեջանական գյուլենականների ցանկը[26]: Իհարկե, կասկածից դուրս է, որ այդ ցուցակը Հ. Զեյնալովի մոտ է հայտնվել Թուրքիայի հատուկ ծառայությունների գործուն միջամտությամբ, որպես նախագահ Ալիևին ուղղված գաղտնի ուղերձ կամ հրահանգ:

Այն, որ թուրքական ներքաղաքական զարգացումները շղթայական ձևով կարող են տեղափոխվել Ադրբեջան, մեծ հավանականություն ունի, արդեն իսկ կան նախանշանները, դա դրսևորվում է հիմա մեդիա հարթությունում և ադրբեջանական իշխանությունների կողմից որոշ գործողություններով: Սակայն դեռևս պարզ չէ, թե նախագահ Ալիևն ի վերջո ինչպիսի քայլերի կդիմի՝ թուրքական օրինակով կոշտ «մաքրազատման», թե «փափուկ բացահայտման»:

Ադրբեջանի նախագահի հրամանագրով մարտի 16–ին պաշտոնից ազատվեց Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծության ու տեղեկատվության բաժնի պետ Էլնուր Ասլանովը, որի անունը կապվում է Ադրբեջանում գյուլենական շարժման հետ, ով, ըստ մի շարք հրապարակումների, պետական ապարատում ազդեցիկ գյուլենականներից մեկն էր[27]:

Փաստորեն, Ասլանովը դարձավ Ադրբեջանում առաջին պաշտոնյա «զոհը»՝ գյուլենականների հետ առնչության համար: Առավել ուշագրավ է հատկապես այն, որ թուրքական իշխանամետ, ազդեցիկ լրատվամիջոցներից մեկը, որն իր վրա է վերցրել տեղեկատվական հարթությունում Գյուլենի դեմ պայքարի հիմնական մասնաբաժիններից մեկը, գլխավոր էջում Ասլանովի ազատումը ներկայացրել էր որպես «Ադրբեջանում զուգահեռ պետության դեմ օպերացիա»[28]:

Ավելի ուշ՝ նախագահ Ի. Ալիևի հրամանով զբաղեցրած պաշտոնից ազատվեց Ադրբեջանի Կրոնական կազմակերպություն–

---

[26] Azerbaycan'da da 'paralel yapı' tartışması, http://www.taraf.com.tr/haber–azerbaycanda–da–paralel–yapi–tartismasi–149779/ 04.03.2014

[27] Hakimiyyət□□□i "nurçu davası"nda bir m□hur "vuruldu", http://www.azadliq.info/siyast/42758–elnur–aslanov–idn–cxarld.html

[28] Aliyev, Gülen Cematinin önemli ismini görevden aldı, http://yenisafak.com.tr/dunya–haber/aliyev–gulen–cematinin–onemli–ismini–gorevden–aldi–17.03.2014–626692

ների հարցերով պետական կոմիտեի նախագահ Էլշադ Իսքեն–դերովը: Ադրբեջանական որոշ լրատվամիջոցներ նրան ներկա–յացնում էին որպես գյուլենական շարժման ադրբեջանական ճյու–ղավորման ներկայացուցիչներից մեկը, իսկ թուրքական մամուլը նրա ազատումը որակեց որպես գյուլենականների դեմ ադրբեջա–նական իշխանությունների հերթական քայլը[29]:

Հավանականությունը մեծ է, որ Թուրքիայի ներքաղաքական արդի գործընթացները տեղափոխվեն Ադրբեջան: Իսկ Ադրբե–ջանում հետայսու գյուլենականների քաղաքական օրակարգը գնալով առավել կազմակերպված բնույթ կկրի՝ կիրառելով դեռևս «ինքնության քողարկման» մեթոդը: Ադրբեջանում հակագյուլե–նական գործողությունները կարող են սպառնալ Ալիևին ու նրա վարչակազմին, իսկ Ադրբեջանի իշխանությունների կողմից գոր–ծողություններ չձեռնարկվելու պարագայում այն վերածվելու է ադրբեջանական ներքաղաքական գործընթացներում լուրջ գոր–ծոնի: Արդեն իսկ Թուրքիայում Էրդողան–Գյուլեն սուր հակամար–տության շրջանակում գյուլենականների կամ այսպես ասած «զու–գահեռ պետության» դեմ գործողությունները կառավարության կողմից իրենց ազդեցությունն ունեցան նաև Ադրբեջանում: 2014 թ. մարտին թուրքական ՁԼՄ–ներում, ընդ որում՝ հիմնականում իշխանամետ, հրապարակումներ ի հայտ եկան Ադրբեջանում գյուլենական կրթական հաստատությունների դեմ կառավարու–թյան գործողությունների մասին: Ըստ այդ հրապարակումների՝ Ադրբեջանի կառավարությունը սկսել էր այդ երկրում գյուլենա–կան համայնքի գործունեության «ուսումնասիրությունը»: Նման գործողություններ սկսել են դրսևորվել գյուլենական կրթական հաստատությունների դեմ, որոնք Ադրբեջանում բավական մեծ մասսայականություն են վայելում: Ադրբեջանի կառավարությունն անցել է գյուլենական շարժմանը պատկանող կրթական հաստա–տությունների դեմ տարբեր ստուգումների ու պատժամիջոցնե–րի կիրառմանը: Ըստ որոշ տեղեկությունների՝ ադրբեջանական կառավարությունը սկսել է գյուլենական համայնքին պատկանող դպրոցների «պետականացման գործընթացը»: Ըստ այդմ՝ Բաք–վում գործող «Çağ–Kafkas» համալսարանը և դպրոցները անցել են «Ադրբեջանի միջազգային կրթական կենտրոնի» հովանու ներքո՝ որպես համակարգող վերադաս մարմնի: Ի դեպ, այդ

[29] Azerbaycan'da Cemaat operasyonu sürüyor, http://www.aydinlikgazete.com/guendem/39715–azerbaycanda–cemaat–operasyonu–suruyor.html, "Elnur Aslanovla El□ad □sg□nd□novun nurçularla birg□ayih□□ri", http://anspress.com/index.php?a=2&lng=az&nid=270455

կառույցը գործում է Ադրբեջանի պետական նավթային ընկերությանը (SOCAR) կից: Ադրբեջանցի պաշտոնյաներից մեկը չի հերքել նման տեղեկությունը և այդ քայլը պատճառաբանել երկրում կրթական ոլորտի արդյունավետության բարձրացման ու համակարգման անհրաժեշտությամբ[30]: Գյուլենական համայնքի ներքո գործող դպրոցները մասնավոր հաստատություններ են, ուստի սրանով փորձ է արվում մի կողմից դրանք վերահսկելու, մյուս կողմից էլ՝ սկսելու դրանց փակման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը:

Փաստորեն թուրքական կողմի ուղերձները կամ ավելի շուտ հորդորները տեղ են հասել, և Ադրբեջանի վարչակազմը, վախ զգալով Թուրքիայում ընթացող զարգացումներից, սկսել է «նախապատրաստական կամ կանխարգելիչ» միջոցառումները:

Կարելի է սպասել հետաքրքիր զարգացումների, քանի որ Ադրբեջանի գյուլենական համայնքի ազդեցիկ ներկայացուցիչները աջակցություն են խնդրել Փենսիլվանիայում գտնվող «վերադասից»:

Թուրքիան ակտիվորեն շարունակում է Ադրբեջանում «զուգահեռ պետության» կամ գյուլենական շարժման չեզոքացման ու վարկաբեկման գործողությունները: Թուրքիայում դրա դեմ կոշտ պայքարի շրջանակներում քայլեր են ձեռնարկվում նաև ադրբեջանական «զուգահեռ պետության» դեմ: Ադրբեջանում որոշում է կայացվել փակել «Yurd TV» հեռուստաալիքը, որը գործում էր Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծության ու տեղեկատվության բաժնի այլևս նախկին պետ Էլնուր Ասլանովի հովանավորությամբ, որի անունը կապվում էր գյուլենական շարժման հետ:

Թուրքական կառավարությանը սպասարկող և գյուլենականների դեմ տեղեկատվական դաշտում ակտիվ պայքար մղող «Sabah» պարբերականը 2014 թ. մարտին հրապարակեց հատուկ մի փաստաթուղթ, որը վերաբերում էր Ադրբեջանում գյուլենական կառույցների ֆինանսավորման խնդիրներին[31]: Ի դեպ, այդ փաստաթուղթն առաջինը հրապարակել է Ադրբեջանի կառավարությանը մոտ կանգնած լրատվական կայքերից մեկը: Էրդողանը իր և իր գլխավորած կառավարության դեմ կաշառակերության ու խարդախության «օպերացիայից» հետո ձեռնամուխ է եղել Ադր-

[30] Gülen okullarına operasyon!, http://sozcu.com.tr/2014/gundem/gulen-okullarina-operasyon-466592/

[31] Cemaat'in para trafiği deşifre oldu, http://www.sabah.com.tr/Gundem/2014/03/13/cemaatin-para-trafigi-desifre-oldu

բեջանում գյուլենական շարժման նմանատիպ օպերացիային, որով ցույց են տրվում Ադրբեջանում պետական պաշտոնյանե–րին տրվող կաշառքների կամ այլ կերպ «նվիրատվությունների» փաստերը: Ադրբեջանում գյուլենական «իմամներից» համարվող Մուստաֆա Թ–ի կողմից Ֆ. Գյուլենին ուղղված զեկույցում նշ–ված են 2013 թ. Ադրբեջանում գործող գյուլենական համայնքի կառույցներին ցուցաբերվող ֆինանսական հատկացումների չա–փերն ու ուղղությունները: Ադրբեջանում գյուլենական համայնքի պատկանող կառույցներից ստացված ընդհանուր գումարը կազ–մել է 53 մլն դոլար, որից շուրջ 17 մլն–ը հատկացվել է կոնկրետ նպատակների ու ֆինանսական ծախսերի համար, իսկ մնացյալ 36 մլն–ը պահվել «հուսալի ձեռքերում»:

Նույն թվականին Ադրբեջանում գործող և գյուլենական շարժ–մանը պատկանող «Hazar» հեռուստաընկերությանը, «Burc FM» ռադիոընկերությանը և «Zaman Azerbaycan» թերթին հատկացվել է ավելի քան 2,4 մլն դոլար: Ադրբեջանում գործող «Ğağ Öğretim» կազմակերպությունների միությանը հատկացվել է մոտ 8,5 մլն դոլար: Ավելի քան 500 հազար դոլար էլ հատկացվել է Ադրբե–ջանում գյուլենական համայնքի քարոզչության ու ներկայացման նպատակով՝ գրքերի, տեղեկագրերի, բրյոշուրների ու միջոցա–ռումների կազմակերպման միջոցով: Այստեղ առավել հետաքր–քիրը Ադրբեջանում պետական պաշտոնյաներին ու «կարևոր անձանց» վարձատրության ու «նվիրատվությունների» համար առանձնացված գումարներն են: Պետական հաստատությունե–րում ու կառույցներում գյուլենական շարժման «բարեկամներին» որպես ամսեկան աշխատավարձ հատկացվել է ավելի քան 3,5 մլն, իսկ Ադրբեջանի «ազդեցիկ» մարդկանց նվիրատվությունե–րի ու նվերների համար՝ 732 հազար դոլար[32]: Փաստորեն սա այն ծախսերի մի մասն է, որը կոչված է ապահովելու շարժման տե–ղեկատվական–քարոզչական գործունեության ու «ներթափանց–ման» համար: Հիմնական ֆինանսական միջոցները գոյանում են նույն Ադրբեջանում գործող, համայնքին պատկանող բիզնես կառույցներից: Առաջիկայում կարելի է սպասել Ադրբեջանում շարժմանը պատկանող բիզնես կառույցներին ու ընկերություն–ներին, ինչպես նաև կոնկրետ անձնաց դեմ գործողությունների, քանի որ, ըստ երևույթին, Ալիևը տվել է իր «հավատարմության երդումն» Էրդողանին:

[32] Նույն տեղում:

2014 թ. ապրիլին Թուրքիայի վարչապետ Էրդողանի կատարած այցը Բաքու կարելի է դիտարկել նաև գյուլենականների դեմ Ադրբեջանի իշխանությունների կատարելիք գործողությունների համատեքստում: Էրդողանին պետք էր ստանալ նաև Ադրբեջանում գյուլենականների դեմ Ալիևի հավատարմությունն ու պայքարի հստակ երաշխիքներ: Թուրքական կառավարությանը մոտ կանգնած լրատվամիջոցները, հղում կատարելով ադրբեջանականներին, գրում էին, որ Էրդողանը Բաքու է այցելել՝ օրակարգում ունենալով նաև Ադրբեջանում գյուլենականների դեմ գործողությունների հարցը և Ադրբեջանում գյուլենական ցանցի ու դեմքերի վերաբերյալ անձամբ գաղտնի փաթեթ ներկայացրել ադրբեջանական բարձրագույն իշխանություններին[33]: Ավելի ուշ Էրդողանը հայտարարեց, որ Ադրբեջանում կայացած հանդիպումներում քննարկվել է նաև Թուրքիայում և Ադրբեջանում գյուլենականության դերակատարության հարցը[34]: Էրդողանի այցի ընթացքում Ադրբեջանում գյուլենական կրթական ցանցի՝ «Çağ Öyrətim İşlətmələri» հոլդինգի ղեկավար Է. Օզերենը հանդես եկավ Էրդողանի դեմ՝ նշելով, որ Թուրքիայի իշխանությունները չպետք է միջամտեն Ադրբեջանի ներքին գործերին[35]:

2014 թ. մայիսին Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությանն ու կառավարությանը մոտ կանգնած թուրքական մամուլը հրապարակեց, որ Ադրբեջանում շարունակվում են Գյուլենի ու «զուգահեռ պետության» դեմ գործողությունները: Ըստ այդ հրապարակումների՝ Ադրբեջանի կրթության նախարարությունը հրաժարվել է երկարաձգել իր հաշվեկշռում գտնվող և գյուլենական հիմնադրամի կողմից շուրջ 15 տարի շարունակ վարձակալված «Դամլա» անունը կրող հանրակացարանը[36]: Ադրբեջանի կառավարությունը վերջին շրջանում տարբեր գործողություններով փորձում է ցույց տալ թուրքական կողմին իր հետևողականությունը երկրի ներսում գյուլենականների դեմ պայքարի հարցում և մյուս կողմից էլ՝ ձգտում դանդաղ ու զուսպ գործողություններով չեզոքացնել դրա դերակատարությունը:

---

33 Başbakan dosyayı eliyle teslim etti, http://www.sabah.com.tr/Gundem/2014/04/05/basbakan–dosyayi–eliyle–teslim–etti

34 Erdoğan: Azerbaycan'da 'paralel yapı'yı konuştuk, http://www.ilkehaber.com/haber/erdogan–azerbaycanda–paralel–yapiyi–konustuk–29265.htm

35 Представитель Фетхуллаха Гюлена в Баку выступил против Эрдогана, http://haqqin.az/news/19924

36 Azerbaycan'da paralel temizlik devam ediyor, http://www.takvim.com.tr/Guncel/2014/05/14/azerbaycanda–paralel–temizlik–devam–ediyor

Եվ ահա արդեն մեկ ամիս անց ադրբեջանական լրատվամիջոցները հրապարակեցին, որ Ադրբեջանում դադարեցվել է շարժման կրթական ցանցի «Araz Kurslari» մինչբուհական նախապատրաստական դասընթացների գործունեությունը[37]: Դեռևս 2013 թ. մարտին Ադրբեջանի պետական նավթային ընկերության (SOCAR), գյուլենական շարժման «Çağ Öyrətim İşlətmələri» կազմակերպության ու «Praktikal Salyuşns Qrup» ընկերության միջև ստորագրված փաստաթղթով՝ հիմնվեց «Ադրբեջանական միջազգային կրթական կենտրոն» հասարակական միավորումը, որի կազմի մեջ մտան շարժման կրթական հաստատությունները, այդ թվում նաև դպրոցները, համալսարանն ու «Araz» դասընթացները[38]: 2014 թ. հունիսի 18-ին «Ադրբեջանական միջազգային կրթական կենտրոնի» ընդհանուր ժողովը որոշում կայացրեց փակելու այդ կենտրոնի շրջանակում գործող դպրոցներն ու դասընթացները՝ բարեփոխումների ու առկա ֆինանսակառավարչական խնդիրների պատճառով[39]:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ Թուրքիայում տեղի ունեցած զարգացումները և թուրքական կառավարության դեմ իրականացված վարկաբեկիչ գործողությունները լրջորեն անհանգստացրած պետք է լինեն Ադրբեջանի իշխանություններին: Եվ եթե նախկին տարիներին Ադրբեջանում գյուլենական շարժման դեմ լուրջ քայլեր չէին իրականացվում, ապա դա պայմանավորված էր ԱԶԿ-ի և Ֆ. Գյուլենի միջև դաշնակցային հարաբերություններով, ինչը կարող էր վնասել երկու երկրների հարաբերությունները, քանի որ գյուլենականությունն Ադրբեջանում դիտվում էր որպես Թուրքիայի կողմից հասարակական, կրթական ու կրոնական գործունեության, ազդեցության տարածման կարևոր լծակ: Իրավիճակը էականորեն փոխվել է, սակայն Ադրբեջանի իշխանությունները, հաշվի առնելով թուրքական սցենարները, կդրսևորեն փոքր-ինչ զգուշավորություն գյուլենականության դեմ պայքարի շրջանակում:

Վերջին տարիներին ընդհանրապես Ադրբեջանում նկատվում է կրոնական գործոնի դերակատարության աճ, ինչն առա-

[37] Azərbaycanda “Araz Kursları” MMC-nin fəaliyyətinin dayandırılması haqqında qərar verilib, http://az.trend.az/news/society/2286547.html

[38] Расширяются ряды учрежденного ГНКАР Общественного Объединения «Международный образовательный центр», http://www.socarplus.az/ru/article/345/rasshiryayutsya-ryadyi-uchrejdennogo-gnkar-obschestvennogo-obyedineniya-quotmejdunarodnyiy-obrazovatelynyiy-tsentrquot

[39] ԱՊՆԸ-ի պաշտոնական էջ, http://new.socar.az/socar/az/news-and-media/news-archives/news-archives/id/7449

վել ցայտուն է դրսևորվում իսլամական տարբեր ծայրահեղական խմբավորումներում ադրբեջանցիների ներգրավվածության աճի միտումներում: Այդ տեսանկյունից առավել խոսուն է Սիրիայում ընթացող պատերազմի օրինակը, որում գնալով ավելանում է ադրբեջանցիների ներգրավվածությունը տարբեր ծայրահեղական կառույցներում:

Ադրբեջանում իսլամական քաղաքական օրակարգի խնդիրը գնալով ավելի ակնառու է դառնում: Մասնավորապես դա լավագույնս դրսևորվեց Սիրիայում ընթացող հակամարտության ժամանակ, երբ ծայրահեղ իսլամական ապստամբների շարքերում գնալով աստիճանաբար մեծացավ ադրբեջանցիների թիվը: Ծագումով ադրբեջանցի իսլամական ծայրահեղականների ակտիվությունը Սիրիայում նկատվում է շատ վաղուց, ընդ որում՝ այդ երկրում կռվող ադրբեջանցիներից բաղկացած ծայրահեղական խմբավորումները բազմաթիվ են և համալրված են արդի զինամթերքով:

Ադրբեջանի քաղաքական կյանքի ոչ շատ հեռավոր ապագայում չի բացառվում, որ այս նույն ադրբեջանական զինյալների ակտիվ մասնակցությամբ արդեն այդ երկրում կկազմակերպվի «սրբազան պատերազմ»՝ ընդդեմ «անհավատ իշխանությունների», իսկ այն, որ իսլամական արժեհամակարգն ու շարժումները կենսունակ են դառնում, արդեն նկատելի փաստ է: